## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Կան հետաքրքիր վկայություններ, թե մ.թ.ա., տարբեր երկրներում մարդիկ ինչպես են պայքարել ալկոհոլային ըմպելիքների կիրառումը չարաշահողների դեմ:

.... Մ.թ.ա. 1220 թ. Չինական կայսր Վու Վենգը հրապարակեց հրովարտակ, որի համաձայն գինարբուքի ժամանակ բռնված բոլոր մարդիկ ենթարկվում են մահապատժի:

....Հին Սպարտայում ՝ համաձայն իշխանության հրամանի, ընտրված մի պաշտոնյա պետք է գինովցած քայլեր քաղաքի փողոցներով, որպես տեսու դաս երիտասարդ քաղաքացիների համար:

....Հին Հնդկաստանում ալկոհոլից ձեռնպահ մնալը պարտադիր էր բոլոր դասի մարդկանց համար: Գինովցած մարդկանց բռնելով՝ խմեցնում էին հալած արծաթ, արճիճ կամ պղինձ:

.....Անգլիայում անցած դարի սկզբում հարբած ծովակալներին բռնում, հագցնում էին կեղտոտ հագուստ, վզից կախում էին «հարբեցող» գրառումը և ստիպում էին կատարել ամենաստորացուցիչ գործերը:

....100 տարի առաջ Ռուսաստանում, Սամարայի շրջանում կար հին սովորույթ. չհողարկավորել այն մարդուն, ով մահացել է հարբեցողությունից: Այդպիսիներին գցում էին գետը, կամ թաղում անտառում: Հավատքի համաձայն, հարբեցողի հողարկավորությունը /ըստ քրիստոնեական սովորույթի/ կարող էր առաջացնել անբերրիություն կամ երաշտ:

**2.** Քրիստոսի առաջին հրաշքը՝ սովորական ջրի վերածումն է գինու: Եկեղեցին գինի օգտագործում է մի շարք ծիսակատարությունների ժամանակ: Նպատակը՝ Աստծո հետ հաղորդակցվելն է գինու օգնությամբ: